

Յ. Գ.: Պէտք է նկատել, որ այս հատուածը, խորենացու պատմութեան գլուխներին դասաւորութեան համաձայն՝ անցեալ տարուայ հրատարակածի մի կտորը պիտի կաղմէր, բռնելով նորա մէջ այնպիսի մի տեղ, որի կապը մենք շատ բնական էինք գտել և նորա որեւէ միջանկեալով բնդհատուած լինելը դժուար ենթադրելի: Այժմ ևս մենք այդ կարծիքը փոխելու հարկ չենք տեսնում և աւելի հաւանական ենք համարում, որ եթէ խորենացու պատմութեան մի նախնական գրուածք եղել է, նիւթն էլ այնտեղ տարբեր կերպով դասաւորուած լինէր:

Կ. Վ.



Բացունցաւ զարուն... Հոգիս քերկրութեամբ
Սըլանում է վեր, այնտեղ՝ ուր սիրով
Ժիծաղում է ինձ մի երկինք անամպ
Մերսի ոսկեայ պայծառ շողերով:

Կ'ուզէի երգել, քաղցր ու ներդաշնակ,
Կորովի ձայնով, եւ վառել սրտեր,
Որ երգըս, որպէս զարնան յորդ վտակ
Սար, դաշտ ու անտառ, ձորեր թնդացնէր:

Եւ իմ՝ նրազաճ յուսոյ մեղիղին
Նոր կեանքի զարուն կ'աւետէր մարդկան,
Եւ մարութ հաստն ինչպէս շողն այգին՝
Կը ցրուէր խաւարն միայլ գիշերուան:

Ես սէր կ'երգէի, քայց եւ ագնիւ մարտ....
Այլ անխ, ցրտերից խամրեցաւ զարուն,
Թօշնեցաւ սրտիս անոյշ կոկոն վարդ,
Կապուած է եւ լուռ վտակ կարկաչուն:

Յ. Յովնանիսեան.



ԱՌԱՃՆԵՐ ՎԱՆԱՅ ԲԱՐԲԱՌՈՎ.

Իրիշկէ գլխաւորի փրզուծի մեծ արա-
իրիշկէ որդի փրզուծի բուժուր արա:

Խաղայ կշտափորիկ,
Զխաղայ կարմրատոտիկ:

Խարանի գեղէն, խաղնի գեղէն,
Նղնի գեղէն, չուրնի տնէն,
Ռէս Օխան քէս տունը շէն:

Խապար կուգեայ,
Խապար կը խանի դիւ:

Խարանիս ձի պիտի,
Խալ օինէն իմ խալիս մարին:

Խուսի գլորաւ, գնտաւ պուտուկ:
Ժառ կը յնի՝
Ճեօղ կը կայնի:

Ժիծենակը տան շինութեն ի,
Մեծուղը տան աւիրութեն ի:

Կայ աշխարի,
Զկայ անապատի:

Կայ ևէզն, որ զանէ վեր վզն:

Կներ ես մաճուն:
Թուր ես առուն:

Կիրակմուտ, քնց կիրակի:

Կնիկի ստաւ մուղտուսի
Ուր կը պահի էլին կասի:

Կնկայ մարդ սեղան,
Մարդու մարդ փողան:

Կոէթ (կոշտ) անձրեւի տակ նստէր, քարի դարտ կուլայ:

Համ խզան,
Համ դզլեզան:

Համ Էլայ Սորիայ տանձից,
Համ Խալայ ինձորից:

Հալարտ մարդու քիթն է հալման,
Աշքն տակէ, խղի թալման:

Զոն գլխիդ
Հող գլխիդ:

Ճարտար մուկ չուստ ոտնով կը յնի անխառ:

Ճեղմակիս պատի տակիս:

Մանէն մանածի,
Պատէն կախածի:

Մասխարայ,
Անձեղներաց էլ մասխարայ:

Մեծ գլուխ դովաթի,
Պզտիկ գլուխ շոշաթի:

Մարդ ու կնիկ կոռւան,
Տխմար մարդ գիտցաւ բաժուան:

Մեղաւոր նստաւ լուացք,
Ձէն էտուր ամաւերաց:

Մեռն ուտի կը յարի,
Կնիկանին ոտներ կը լարի:

Ս. ՀԱՅԿՈՒՆԻ.